600.0257.21.05.10

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մայիսի 2010 թվականի №257Ա
քաղ. Երևան

### «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2010-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ժդ) կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի ը) ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2010-2012 թվականների ներդրումային ծրագրին՝ 24 203,3 մլն դրամ ծավալով՝ առանց ավելացված արժեքի հարկի, որից 2010 թվականին՝9 515,7 մլն դրամ՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

    1) գազափոխադրման համակարգում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցում և ընդլայնում. 2010-2012 թվականների ընթացքում՝ 1 209,0 մլն դրամ, որից 2010 թվականին՝ 319,0 մլն դրամ (հավելված №1),

    2) գազափոխադրման համակարգի վերակառուցում. 2010-2012 թվականների ընթացքում՝ 4 445,2 մլն դրամ, որից 2010 թվականին՝ 2 394,0 մլն դրամ (հավելված №2),

    3) գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ. 2010-2012 թվականների ընթացքում՝ 1 179,9 մլն դրամ, որից 2010 թվականին՝ 278,2 մլն դրամ (հավելված №3),

    4) գազաբաշխման համակարգի ընդլայնում. 2010-2012 թվականների ընթացքում՝ 2 284,1 մլն դրամ, որից 2010 թվականին՝ 1070,0 մլն դրամ (հավելված №4),

    5) գազաբաշխման համակարգի վերակառուցում. 2010-2012 թվականների ընթացքում՝ 4 486.4 մլն դրամ, որից 2010 թվականին՝ 669,7 մլն դրամ (հավելված №5),

6) գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրում-ներ. 2010-2012 թվականների ընթացքում` 10 598,7 մլն դրամ, որից 2010 թվականին` 4 784,8 մլն դրամ (հավելված №6):

2. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը` մինչև 2010 թվականի նոյեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ընկերության 2011-2013 թվականների ներդրումային ծրագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն-ները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 1-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2009-2011 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №314Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ` Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք.Երևան
21 մայիսի 2010թ.
ժամը $16^{00}$